

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿՐԱ**

ՆԱՐԵԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Այսօր համաշխարհային տնտեսական ճգնաժամը դարձել է ոչ միայն զարգացած երկրների, այլև փոքր տնտեսություն ունեցող երկրների մակրոտնտեսական կայունության ապահովման և մրցունակ տնտեսություն կառուցելու խոչընդոտ: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը դրսևորվում է ֆինանսական ակտիվների կտրուկ վատթարացմամբ, իրացվելի միջոցների, ֆինանսական հաստատությունների կապիտալիզացիայի մակարդակի նվազմամբ, վստահության իսպառ բացակայությամբ: Ձարգացած երկրներում հարյուրավոր խոչորագույն ընկերությունների սնանկացումը, ֆինանսական շուկաների կենսագործունեության խաթարումը էապես փոխում են շուկայի մասնակիցների վարքագիծը:

Հիմնական գլոբալ խաղացող Միացյալ Նահանգների տնտեսության մեջ առաջին անգամ նկատվեց ներդրումների զուտ ներհոսք՝ արձանագրելով դոլարային էքսպանսիայի ավարտը: Սա իր հերթին հանգեցնում է ճգնաժամի խորացմանը աշխարհի գրեթե բոլոր զարգացած ֆինանսական շուկաներում և զարգացող երկրներին զրկում է օտարերկրյա կարճաժամկետ ֆինանսական միջոցներից:

Հիփոթեքային շուկայում ձևավորված ֆինանսական «փուչիկները», որոնք սնուցվում էին անկատար, արհեստականորեն բարդացված ֆինանսական համակարգից, պայթեցին՝ բացահայտելով ֆինանսական և իրական հատվածի միջև առկա էական շեղումը: Ֆինանսական հատվածը արժեթղթերի շուկայի միջոցով պարտադրեց համապատասխան ճշգրտումներ կատարել իրական (կորպորատիվ) հատվածում: Սա էլ հանգեցրեց իրական հատվածի խարխլմանը¹:

Միևնույն ժամանակ բացահայտվեց գլոբալ ֆինանսական և տնտեսական համակարգերի կառավարման, կարգավորման և վերահսկողության անկատարությունը:

Այսպիսով, գլոբալ ֆինանսական ճգնաժամը հանգեցրել է՝

ա. կարճաժամկետ ֆինանսական միջոցների լայնածավալ արտահոսքի,

բ. զարգացող երկրներում ներդրումային ծրագրերի կրճատման և հետաձգման,

գ. շուկայի մասնակիցների միջև վստահության կորստի:

2008 թվականի համաշխարհային տնտեսական ճգնաժամն էական ազդեցություն ունեցավ նաև Հայաստանի մակրոտնտեսական միջավայրի և մրցունակության վրա՝ հանգեցնելով տնտեսական աննախադեպ ու անսպասելի անկման վերջին տասը տարիներին շարունակվող տնտեսա-

¹ Տե՛ս «ՀՀ կառավարության հակաճգնաժամային ծրագիր», 2009:

կան աճի ֆոնին: 2009 թ. Հայաստանի տնտեսությունը գրանցել է ամենամեծ անկումը ԱՊՀ, Արևելյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի երկրների շարքում: Վերոնշյալ երեք տարածաշրջաններում Հայաստանից ավելի վատ արդյունք են գրանցել միայն նախկին խորհրդային երեք հանրապետությունները՝ Լատվիան, Լիտվան և Էստոնիան, որոնք ներկայումս Եվրամիության անդամ երկրներ են: 2009 թ. տնտեսական անկման պատճառ դարձավ երկրի տնտեսության կախվածությունը որոշակի ոլորտներից՝ հանքարդյունաբերությունից (ճգնաժամի հետևանքով դադարեցին գործել հանքարդյունաբերական երկու խոշոր ու մի շարք փոքր գործարաններ) և շինարարությունից (2009 թ. հունվար-նոյեմբերին 2008 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ շինարարության ծավալները կրճատվել են 38.4 տոկոսով)²: Մեկ այլ խորքային պատճառ դարձավ ֆինանսական ու իրական հատվածների միջև առկա գլոբալ անհամաչափությունը, ինչպես նաև անհամասնությունը հենց ֆինանսական հատվածի ներսում և միջազգային առևտրում:

2009 թվականը Հայաստանը փակեց 14.4 տոկոս տնտեսական անկումով, ինչը համապատասխանում էր Արժույթի միջազգային հիմնադրամի և միջազգային ֆինանսական մի շարք կառույցների կանխատեսումներին: Հայաստանի պայմաններում անկմանը նպաստած ամենալուրջ անհամասնությունը տնտեսության ձևախեղված կառուցվածքն էր, մասնավորապես այն, որ շինարարությունն ավելի մեծ տեսակարար կշիռ ուներ տնտեսության կառուցվածքում, որը մի քանի անգամ գերազանցում էր մնացած երկրների տվյալ ցուցանիշը: Զարգացումների նման սցենար արդեն իսկ կանխատեսվում էր. հետևանքները եղան **սպառման ծավալների կրճատումը, վճարային հաշվեկշռի վատթարացումը, վարկատուների բացասական սպասումների ձևավորումը, գործազրկության աճը:**

Ընդհանրացնելով կարելի է փաստել, որ տնտեսական ճգնաժամի ազդեցությունն ավելի էական է հետևյալ ուղղություններով՝ մասնավոր տրանսֆերտներ, արտարժույթի շուկա, գնաճ, հանրային ֆինանսներ, ինչպես նաև միջազգային վարկանիշային կազմակերպությունների կողմից գնահատված ռիսկի մակարդակ (տե՛ս գծապատկեր 1):

2008 թ. օտարերկրյա տրանսֆերտների աճը շարունակվել է, բայց ավելի դանդաղ տեմպերով: Ենթադրվում էր, որ ճգնաժամի ազդեցությունը որոշ ուշացումով (լագով) կանդրադառնա տրանսֆերտների մակարդակի վրա: Մասնավոր տրանսֆերտների հոսքը Հայաստան 2009 թ. առաջին եռամսյակում 2008 թ. համապատասխան ժամանակահատվածի համեմատությամբ նվազեց 30.5%-ով (տե՛ս պատկեր 1):

Ազգային արժույթի փաստացի ֆիքսված փոխարժեքային ռեժիմը (սա նաև անվանում են «կառավարվող լողացող»), որ ենթադրում էր Կենտրոնական բանկի գործուն միջամտությունը, 2009 թվականի մարտին փոխվեց լողացող փոխարժեքային ռեժիմի: Արդյունքում ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեց 20%-ով³ (տե՛ս պատկեր 2): Դրամի արժեզրկումը 2009 թվականի առաջին կիսամյակի ՀՀ ֆինանսական համակարգի ամենաէական ցնցումներից էր: Փոխարժեքի կուրսի պահպանման նպատակով 2008 թվականի հոկտեմբերից ՀՀ ԿԲ-ն արտարժույթ է ներմուծում շուկա,


² ԱՎԾ, 2009 թ., 1-ին եռամսյակ:

³ Տե՛ս ԿԲ 2009 թ. տվյալները, www.cba.am

քանզի ՀՀ դրամի վրա բացասական ճնշումները գնալով ուժգնանում էին՝ պայմանավորված արտահանման նվազող ծավալներով և բացասական սպասումներով: Հոկտեմբերից ի վեր շուկա ներմուծված արտարժույթի ընդհանուր ծավալը մոտ 730 մլն ԱՄՆ դոլար է, ինչը կազմում է միջազգային պահուստների (դրանք վերջին չորս տարում գրեթե կրկնապատկվել էին) էական մասնաբաժինը:


Գծապատկեր 1

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ընթացքը



Պատկեր 1


Մասնավոր տրանսֆերտների դինամիկան



Աղբյուր՝ ԱՎԾ, Հայաստանի կենտրոնական բանկ (ԿԲ)

Պատկեր 2

Համախառն միջազգային պահուստների և փոխարժեքի դինամիկան



Աղբյուր՝ ԱՎԾ, ԿԲ

Ազատ շուկայական մեխանիզմին անցումն անխուսափելի դարձրեց ազգային արժույթի արժեզրկումը արտարժույթի առաջարկի ոչ բավարար մակարդակի պատճառով, ինչն էլ պայմանավորված էր միջազգային գների անկումով, արտահանումից եկամուտների և օտարերկրյա տրանսֆերտների նվազմամբ:


Լողացող փոխարժեքային ռեժիմի անցնելը դրականորեն արձագանքեցին Համաշխարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը:

Շուկայի մասնակիցների սպեկուլյատիվ սպասումները կանխելու նպատակով ԿԲ-ն թույլ տվեց ազգային արժույթի կտրուկ արժեզրկումը 20%-ով, ինչից հետո դրամ/դոլար փոխարժեքը կայունացավ 370-380 սահմաններում:

Հայաստանում գների վերջին տատանումները մեծամասամբ պայմանավորված էին համաշխարհային շուկաներում ընթացող զարգացումներով: Երկրում սղաճի մակարդակը, որ Կենտրոնական բանկի քաղաքականության գլխավոր թիրախն է, 2008 թվականին կազմել է միջինը 8.5%: Ազգային արժույթի արժեզրկման և ներմուծման տարիֆային ու ոչ տարիֆային խոչընդոտների (Հայաստանի կառավարության ներմուծման փոխարինման քաղաքականության համատեքստում) ազդեցությամբ 2009 թվականի առաջին կիսամյակում գնաճը կազմեց ընդամենը 2.7% (տե՛ս պատկեր 3): 2009 թվականին դիտարկվող պահանջարկի անկումը ևս նպաստեց գների նկատելի աճի կանխմանը⁴:

Պատկեր 3


Սպառողական գների ինդեքսի դինամիկան Հայաստանում



Աղբյուր՝ ԱՎԾ

Պատկեր 4

Բանկային հատվածի հիմնական ցուցանիշների դինամիկան



Աղբյուր՝ ԱՎԾ, ԿԲ

⁴ Տե՛ս «Հայաստանի Ազգային նրցունակության գեկույց», Եր., 2009 թ.:

Ավանդային և վարկային տոկոսադրույքների միջև առկա մոտ 10%-ի տարբերությունը արտացոլում է Հայաստանի ֆինանսական միջնորդության համակարգի անարդյունավետությունը: Ավանդային և վարկային դրույքները նախորդ տարի բարձրացել են: Մասնավորապես, վարկային տոկոսադրույքները միայն 2009 թ. հունվարին բարձրացան 3 տոկոսային կետով: Թեև վարկային և ավանդային տոկոսադրույքների միջև եղած տարբերությունը տարվա վերջին ամիսներին նվազել է, սակայն այն դեռևս մտահոգության առարկա է: Ավելին, նվազող գնաճի համատեքստում 19% վարկային դրույքը իրական մեծությամբ նշանակալիորեն բարձր է (տե՛ս պատկեր 4):

Հայաստանի կառավարությունը կարողացավ պահպանել բյուջեի դեֆիցիտի և արտաքին պետական պարտքի չափավոր մակարդակը:

2008 թվականին Հայաստանի բյուջեի դեֆիցիտը կազմեց ՀՆԱ-ի 1.2%-ը, ինչը զգալիորեն ցածր է 2000 թվականի 4.8%-ի համեմատությամբ: Բյուջեի նվազող դեֆիցիտի շնորհիվ 2007 թվականին պետական պարտքը կազմեց հարկային եկամուտների 65%-ը, ինչը զգալիորեն ցածր է 2004 թվականի 139%-ի համեմատությամբ: 2006-2008 թվականներին արտաքին պարտքի նվազման տեմպը կայուն էր՝ 9 տոկոսային կետի սահմաններում⁵: Չնայած նշված նպաստավոր պայմաններին՝ երկրների ռիսկի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) վարկանիշի համաձայն, Հայաստանը բավականին ոչ նպաստավոր դիրք ունի նմանակից երկրների համեմատությամբ, ինչը, ըստ ՏՀԶԿ-ի, վկայում է արտաքին պարտքը սպասարկելու երկրի անբավարար ունակությունների մասին (տե՛ս աղյուսակ 1): 1-7 սանդղակով (7-ը որպես ամենաբարձր ռիսկի մակարդակ) Հայաստանի դիրքը Արևելյան Եվրոպայի, ԱՊՀ և ԵԽ-ի երկրների միջին ցուցանիշների համեմատությամբ բավականին անբարենպաստ է:

2006 թվականին «Fitch» վարկանիշային գործակալության՝ առաջին անգամ Հայաստանի վարկունակության գնահատումից ի վեր մեր երկրի վարկանիշը փոխվել է ևս երկու անգամ: Այն բարելավվեց 2008 թվականին:

Այս դրական փոփոխությունը պայմանավորված էր տնտեսության արագ աճով, հանրային ֆինանսների կայունացմամբ, ինչպես նաև գնաճի ընդունելի մակարդակներով: Սակայն արդեն 2009 թվականի հունիսին վարկանիշային գործակալությունը նվազեցրեց Հայաստանի ինչպես երկարաժամկետ, այնպես էլ տեղական արժույթի երկարաժամկետ թողարկողների դեֆոլտի վարկանիշները մեկ կարգով (ԹԴՎ)՝ «BB»-ից «BB - »-ի: Փոփոխությունը բացատրվեց արժույթի նկատմամբ վստահության անկմամբ՝ ֆինանսավորման աղբյուրների սահմանափակության, Ռուսաստանից եկող տրանսֆերտների նվազման և ազգային արժույթի արժեզրկման հետևանքով:

Հեռանկարի գնահատականը «կայուն» է, որին նպաստում են հանրային և արտաքին պարտքի թույլատրելի մակարդակները:

⁵ Տե՛ս ԱԿԾ, 2008 թ., www.armstat.am

ՏՀՁԿ երկրների ռիսկի վարկանիշ

Երկիր/երկրախումբ	Ցուցիչ
Հայաստան	6
ԱԵ	3.69
ԱՊՀ	5.83
ԵՆ	5.44

Աղբյուր՝ ՏՀՁԿ, 2008 թ.

«Մուդիս» վարկանիշային կազմակերպությունն օտարերկրյա և տեղական արժույթի գծով Հայաստանին շնորհել է «Ba2» վարկանիշ: 2009 թվականի հունվարին «Մուդիս»-ը Հայաստանի ֆինանսական կառույցները գնահատեց որպես բացասական հեռանկար ունեցող: Վերջինս հավանաբար արտացոլում էր երկրի քաղաքական և ընդհանուր գործառնական միջավայրում առկա անկայունությունը: Գործակալությունը նաև հայտարարեց, որ Հայաստանի բանկային համակարգում վտանգված է ակտիվների որակի հիմնախնդիրը՝ պայմանավորված 2009 թվականին սպասվող տեղական, ինչպես նաև հիմնական առևտրային գործընկերների տնտեսական անկմամբ: Հիմնական ֆինանսական ռիսկը համարվում է անկատար եկամտային բազան: Այնուամենայնիվ, վերջինս մեղմացվում է պարտքի սպասարկման բարենպաստ պայմաններով և վարկատուների հետ համագործակցության արդյունավետ մեխանիզմներով⁶:

Եթե ճգնաժամի ազդեցությունը դիտարկենք տնտեսության մրցունակության վրա ունեցած ազդեցության տեսանկյունից, ապա մրցունակությունը որոշող 12 հենասյուներից⁷ առավելապես խոցելի եղան մակրոտնտեսության, ապրանքների շուկայի արդյունավետության, աշխատուժի շուկայի արդյունավետության, ֆինանսական շուկաների կատարելագործվածության մակարդակի, նորարարության հենասյուները: Թեև ճգնաժամի հիմնական գործոնները ունեն մակրոտնտեսական բնույթ, հետևաբար առաջնային կերպով ազդում են մակրոտնտեսությունը բնութագրող հենասյան վրա, բայց այն անուղղակիորեն ներգործում է մնացած բոլոր հենասյուների վրա: Ինքնին մակրոտնտեսական կայունությունը չի կարող ապահովել արտադրողականության աճ, բայց փաստ է, որ անկայունությունը վնասում է տնտեսությանը: Ընկերությունները չեն կարող զարգացման ռազմավարական որոշումներ կայացնել անվերահսկելի գնաճի, սպառողական պահանջարկի անկման, թանկացող ֆինանսական միջոցների պայմաններում, իսկ պետությունը՝ արդյունավետորեն կատարել իր գործառույթները պետական մեծ պարտքի սպասարկմանը զուգահեռ: Այսպի-

⁶ Տե՛ս «Հայաստանի Ազգային մրցունակության զեկույց», 2009 թ.:

⁷ Տե՛ս **Портер М.** Конкуренция. М.–СПб.–Киев, 2005:

սով, տրանսֆերտների և ներդրումային ծրագրերի կրճատումը, ազգային արժույթի արժեզրկումը և համաշխարհային շուկաներում ընթացող զարգացումներով պայմանավորված գնաճը էապես կրճատեցին ընդհանուր ծախսումների մակարդակը: Ի վերջո այդ ամենին ավելացավ նաև արտահանումից ստացվող եկամուտների նվազումը: Ստեղծված իրավիճակը ընկերություններին ստիպեց վերանայելու ծախսերի կառավարումը (ազդեցությունը ընկնում է տեխնոլոգիական պատրաստվածության, նորարարության հենասյուների վրա, արդյունքում՝ արտադրողականության աճի զսպման): Կրճատվող հարկային մուտքերը թեև «փոխհատուցվեցին» կայունացմանն ուղղված վարկային միջոցներով (պետք է նշել, որ այդ վարկային միջոցները հանգեցրին Հայաստանի պետական պարտքի եռապատկմանը, քանի որ երկրի պետական պարտքը նախկին 13 տոկոսից այս տարի դարձավ 37 տոկոս, և այժմ արտաքին պարտքը կազմում է 3.6 մլրդ դոլար), այնուամենայնիվ կառավարության բյուջետային ծախսումների ծրագրերը վերանայվեցին, և եթե նույնիսկ չտուժի, ապա էապես կպակասի սոցիալական զարգացմանը ու ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը: Առաջին դեպքում ազդեցությունը ընկնում է «առողջապահություն և տարրական կրթություն», «բարձրագույն կրթություն և վերապատրաստում» հենասյուների վրա, իսկ երկրորդ դեպքում՝ «ենթակառուցվածքներ» հենասյան վրա: Ըստ զնահատականների՝ նման պայմաններում ակնկալվում է նաև հովանավորչության, կողմնապահության և կոռուպցիոն երևույթների ավելացում (ազդեցությունը ընկնում է «սահմանակարգեր» հենասյան վրա):

Այսպիսով, կարելի է փաստել, որ զարգացման ռեսուրսների վրա հիմնված փուլից արդյունավետության վրա հիմնված փուլին անցած տնտեսության մեջ լրջորեն խարխուլվել են ինչպես ներկայիս, այնպես էլ նախորդ փուլի հիմքը կազմող հենասյուները: Կառավարության մշակած հակաճգնաժամային ծրագրով նախատեսված միջոցառումների արդյունքները գոհացնող չեն (հատկապես սոցիալական ապահովվածության ոլորտում, որտեղ աղքատների թիվը աճել է 90.000 - ով, իսկ պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը՝ ավելի քան 11 տոկոսով): Թեև ծրագրում նշված ուղղություններն արտահայտում են ճգնաժամից դուրս գալու միջոցները, բայց դրանք համակարգային և հետևողական բնույթ չունեն **հատկապես ֆինանսական միջոցների հասանելիության, ապրանքային և աշխատանքային շուկաների արդյունավետության բարձրացման, նոր շուկաների բացահայտման, տնտեսությունը կառուցվածքային փոփոխությունների ենթարկելու ուղղությամբ:** Նման ճգնաժամերը ունեն նաև իրենց դրական կողմը, քանի որ օգնում են բացահայտելու տնտեսության խոցելի կողմերը և երևան հանելու այն ուղղությունները, որոնք հնարավորություն կընձեռեն ստեղծելու և զարգացնելու երկարաժամկետ կայուն մրցակցային առավելություններ:

НАРЕК КОСТАНЯН – *Воздействие глобального экономического кризиса на конкурентоспособность Армении.* – В работе проанализировано воздействие глобального экономического кризиса на макроэкономическую среду и конкурентоспособность Армении, основные факторы его воздействия и их последствия, связь с компонентами конкурентоспособности, антикризисная программа правительства и ее эффективность.

NAREK KOSTANYAN – *The impact of global economic crisis on the competitiveness of Armenia.* – The present paper considers the impact of global economic crisis on the macroeconomic environment and competitiveness in Armenia, illustrates core factors of impact, their consequences and the link with the components of competitiveness, as well as assesses the effectiveness of the anti-recession programme implemented by the government.